

Հաստատում եմ՝

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար,

տեխն.գ.դ., պրոֆեսոր

Ռ.Ռ. Սահակյան

2025թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գարիկ Գագիկի Հովակիմյանի՝ «ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ» խորագրով ժԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Գարիկ Գագիկի Հովակիմյանի՝ «Պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները հետպատերազմյան շրջանում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 3, կայացած՝ 24.09.2025թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ.Գևորգյանը, ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լ.Բաղդասարյանը, դոցենտներ՝ Ք.Վիրաբյանը, Ա.Հարությունյանը, Ա. Հովհաննիսյանը, Լ.Դանիելյանը, Լ.Մարությանը, Զ.Գրիգորյանը, ավագ դասախոսներ՝ մ.գ.թ. Ն.Ներկարարյանը, դոցենտ

Ա.Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտներ՝ Հ.Ավագիմյանը, Վ.Միրզոյանը, Ն.Կոստանդյանը, Մ.Մազմանյանը, Մ.Շահվերդյանը, Ա.Ղազարոսյանը, դասախոս՝ մ.գ.թ. Ն.Հովհաննիսյանը, դասախոսներ՝ Ն. Հովսեփյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Ստեփանյանը:

Աշխարհում տեղի ունեցող պատերազմները ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև խորապես հոգեբանական և սոցիալ-մշակութային լուրջ փորձություն են ինչպես անմիջական մասնակիցների, այնպես էլ խաղաղ բնակչության համար: Գիտական ուսումնասիրությունները վկայում են, որ պատերազմին մասնակցած զինծառայողների հոգեկան առողջությունը, ինքնության զգացումը և սոցիալական հարմարվողականությունը ենթարկվում են առավել ծանր և երկարաժամկետ փորձության: Պատերազմի ազդեցությունը չի սահմանափակվում մարտական գործողությունների ավարտով, այն շարունակում է անդրադառնալ անհատի արժեքային համակարգի, սոցիալական վարքի, միջանձնային հարաբերությունների և հասարակության հետ փոխազդեցության վրա՝ ձևավորելով նոր հոգեբանական իրականություն, որն առավել սուր է արտահայտվում հետպատերազմյան շրջանում:

Պատերազմը ոչ միայն ազգային անվտանգության, այլև սոցիալ-հոգեբանական կարևորագույն մարտահրավեր է, քանի որ այն անխուսափելիորեն ազդում է զինծառայողների, նրանց ընտանիքների և ողջ հասարակության հոգեկան բարեկեցության վրա: Այս իրադրության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու պատերազմական փորձառության հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև մշակելու գիտականորեն հիմնավորված կանխարգելիչ և աջակցող ծրագրեր:

Գ. Հովակիմյանի կողմից կատարված հետազոտական աշխատանքը այս առումով բացառիկ արժեք ունի, քանի որ այն միաժամանակ գիտական և հայրենանվեր նախաձեռնություն է: Հաշվի առնելով մեր պետության առջև ծառացած անվտանգային և ներքին կայունության մարտահրավերները՝ նման հետազոտությունները կարևոր հիմք են ստեղծում ազգային փոքրամասնությունների սոցիալ-հոգեբանական ինտեգրման,



փոխադարձ հանդուրժողականության և միջէթնիկական հակասությունների կանխարգելման համար: Այս գիտական մոտեցումը ոչ միայն նպաստում է զինծառայողների հոգեբանական աջակցությանը և հետպատերազմյան վերականգնմանը, այլև ամրապնդում հասարակական համերաշխությունը, հայրենիքի հանդեպ սիրո և միասնականության գաղափարի շուրջ համախմբման գործընթացները:


Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, հետազոտության նպատակը և դրանից բխող խնդիրները, վարկածը, օբյեկտը, առարկան, ինչպես նաև ձևակերպված են հետազոտության տեսական և կիրառական նշանակությունները: Հատուկ ուշադրություն է դարձված նաև տեսամեթոդաբանական հիմքի կառուցվածքին, որը ապահովում է հետազոտության ամբողջականությունը, տրամաբանական հստակությունը և գիտական փաստարկվածությունը: Այս ամենը վկայում են, որ հեղինակը գիտական աշխատանքի կառուցման և ներկայացման բոլոր պահանջները լիարժեք կերպով կատարել է բարձր գիտական մակարդակով:

Ատենախոսության առաջին երկու գլուխներում կատարված տեսական վերլուծությունը առանձնանում է իր խորությամբ և գիտական հիմնավորվածությամբ: Հեղինակը հիմնվել է մասնագիտական գրականության լայն շրջանակի վրա, օգտագործելով անհրաժեշտ և բազմաբնույթ աղբյուրներ՝ ապահովելով թեմայի համակողմանի լուսաբանումը:

Առաջին գլխում՝ «Անձի ինքնագիտակցության հիմնախնդիրը հոգեբանության մեջ», մանրամասն և համակարգված կերպով ներկայացված են ինքնագիտակցության և հատկապես էթնիկական ինքնագիտակցության հիմնախնդիրների ուսումնասիրությունները հոգեբանական գիտության մեջ: Զուգահեռաբար ուսումնասիրվել են դրանց դրսևորումները ճգնաժամային, սոցիալական և քաղաքական փոփոխություններով պայմանավորված իրավիճակներում, ինչը թույլ է տվել բացահայտել թեմայի արդիականությունը ժամանակակից իրադրության համատեքստում:

Երկրորդ գլուխը՝ «Ձինձառայողների էթնիկական ինքնագիտակցության առանձնահատկությունները», նվիրված է զինձառայողների էթնիկական ինքնագիտակցության առանձնահատկություններին, որտեղ հեղինակը հիմնավորված կերպով ներկայացնում է պատերազմական և հետպատերազմյան փորձառության ազդեցությունը զինձառայողների սոցիալ-հոգեբանական ինքնության վրա: Հատկապես արժեքավոր է հետպատերազմյան շրջանի սոցիալ-հոգեբանական դրսևորումների խորացված վերլուծությունը, որը թույլ է տալիս հասկանալ զինձառայողների ներհոգեբանական փոփոխությունների դինամիկան, էթնիկական պատկանելիության զգացողության վերաիմաստավորման գործընթացները և դրանց դերը հետպատերազմյան շրջանի հարմարման մեջ: Գլխի եզրափակիչ ենթաբաժնում ընդգրկված է հետպատերազմյան շրջանում զինձառայողների էթնիկական ինքնագիտակցության յուրահատկությունների համապարփակ քննարկումը, որն առանձնանում է իր փաստարկվածությամբ և տեսական եզրահանգումների գործնական կիրառելիությամբ:

Ատենախոսության երրորդ՝ «Հետպատերազմյան շրջանում զինձառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումների փորձարարական հետազոտություն» գլխում ներկայացվում է փորձարարական հետազոտության կազմակերպման ամբողջական պատկերը՝ ընդգրկելով հետազոտության փուլերի, կիրառված մեթոդների, գործիքների և ընտրանքի կառուցվածքի մանրամասն նկարագրությունը: Հետազոտության փուլերը, օգտագործված մեթոդները, հետազոտվող համակազմի ընտրությունը համապատասխանում են առաջադրված վարկածին ու պաշտպանության ներկայացվող դրույթներին: Հեղինակը հստակ բացատրում է հետազոտության ընթացակարգային լուծումները, ներկայացնում է արդյունքների հավաքման և մշակման մեխանիզմները, ապահովում է ստացված տվյալների վերլուծության թափանցիկությունը: Արդյունքների որակական և քանակական մշակումները ներկայացված են գրաֆիկական և աղյուսակային տարբերակներով, որոնք ոչ միայն արտացոլում են հետազոտական գործընթացի ողջ դինամիկան, այլև թույլ են



տալիս ընթերցողին պարզորեն հետևել վարկածի ստուգման ընթացքին և ստացված արդյունքների տրամաբանական կապերին:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները և գիտական նորույթը պատշաճ մակարդակով ձևակերպված են և լիարժեքորեն արտացոլված են աշխատանքի ընդհանուր եզրակացություններում: Արդյունքում արված եզրահանգումները և առաջարկությունները հիմնվում են թե՛ տեսական վերլուծությունների, թե՛ փորձարարական տվյալների համադրության վրա՝ ապահովելով դրանց գիտական արժանահավատությունը և կիրառական նշանակությունը: Այս ամենը վկայում է, որ ատենախոսությունն ունի բարձր գիտական արժեք, խորը տեսական հիմնավորում և գործնական կիրառելիություն, ինչը թույլ է տալիս այն դիտարկել ոչ միայն որպես գիտական ուսումնասիրություն, այլև որպես կարևոր ներդրում հոգեբանական գիտության և հետպատերազմյան սոցիալ-հոգեբանական պրակտիկայի զարգացման գործում:

Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 159 համակարգչային էջ: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, գրականության ցանկից և հավելվածից: Օգտագործված գրականությունը (131 գիտական աղբյուր) արտացոլում է հետազոտվող հիմնախնդիրը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 6 հոդվածներում:

Հետազոտական աշխատանքի նկարագրությունն ու քայլերի տրամաբանությունը, առաջադրված խնդիրներին համարժեք հոգեբանական հետազոտման մեթոդների, մեթոդիկաների ընտրությունը, փորձարարական տվյալների որակական, քանակական, մաթեմատիկական վերլուծությունները հավաստի են:

- Ներկայացված աշխատանքը որակական առումով բարձր է գնահատվում շնորհիվ՝
- գիտական աղբյուրների մանրակրկիտ տեսական վերլուծության,
 - տեսագործնական կիրառության նշանակության,



- հետազոտական մեթոդների և մեթոդիկաների հստակ համակարգի ընտրության:
Աշխատանքը գրված է գրագետ, պահպանված են գիտական գրավոր խոսքին հատուկ արտահայտչամիջոցները:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Ատենախոսությունը վերաբերում է 2020թ. -ի 44-օրյա պատերազմին, մինչդեռ աշխատանքի տեսական մասում ներառված չեն 44-օրյա պատերազմի սոցիալ-հոգեբանական հետևանքների մասին մասնագիտական աղբյուրների վերլուծություններ:

2. Հետազոտությանը մասնակցել են 18-65 տարեկան անձինք, սակայն ատենախոսության մեջ բացակայում են տարիքային առանձնահատկությունների վերլուծություններ:

3. Կարծում ենք, որ զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության և սոցիալ-հոգեբանական բնութագրերի դրսևորումները մեծապես պայմանավորված են պատերազմի ելքով՝ ցավալի պարտությամբ և, աշխատանքը կշահեր, եթե վերլուծվեին 1990-ականների արցախյան գոյամարտի հաղթանակից հետո հետպատերազմյան շրջանում զինծառայողների հետ հոգեբանական հետազոտությունների վերաբերյալ մասնագիտական աղբյուրներ:

4. Աշխատանքում կան լեզվական, համակարգչային բացթողումներ:

Վերը նշված դիտողությունները չեն արժեզրկում ատենախոսության գիտական նշանակությունը: Հեղինակի կողմից ստացված գիտական արդյունքները, կատարած եզրահանգումները կարելի է որակել որպես հոգեբանության մեջ գիտական հիմնախնդրի լուծում և ներդրում հոգեբանության բնագավառում:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, գործնական նշանակությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Գարիկ Գագիկի Հովակիմյանի՝ «Պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական



դրսևորումները հետպատերազմյան շրջանում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ժԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:



Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,

մ.գ.թ., դոցենտ՝

Լ.Գ. Բադլասարյան

Լ. Բադլասարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՎՊՀ-ի գիտքարտուղար,

մ.գ.թ., դոցենտ՝



Ս.Ս. Բեժանյան